

րին յատակը ջրհոր մը կար որ շատ խորունկ էր, ինչպէս ստորերկրեայ ուղիւն, նմանապէս ջրհորը միշտ փակ էր: Այս պայմաններուն մէջ աւանդութիւնը առանց հերքումի երկիւղով կը շարունակէր իր ընթացքը: Կարծեցեալ ուղիւն բերանը, որչափ որ գիտենք, չէ գտնուած, բայց հորին բերանէն կը մնայ հորապըսակ մը՝ (Margelle) այժմ տեղափոխուած, որուն վրայ գանակի ծայրով մը փոքրիկ խաչեր քանդակուած են: Սեղանները որոնց բոլորակ ձևը կը հաստատուի Բեռնարդոս վանականէն, գուցէ ձիթահանքի քարեր էլնու կը վերաբերէին Գեթսեմանիի ազարակին նախնական հաստատութեան: Այժմ անոնք գոյութիւն չունին, ինչպէս նաև անոնց քով գտնուած քարէ աթոռները: Է. դարուն այրը գոցուած է փայտէ պարզ դուռով մը (P. P. V. A. հատ. Բ. էջ 311): Նոյն մտօք կ'արտայայտուի նաև Պաղեստինցի Եպիփան (Bar. gd. էջ 84):

Յովհաննէս Եպս. Երուսաղէմացին այրին մասին կը գրէ հետեւեալը. «Աստի մինչև ցրմբոնման տեղին ի ներքոյ երկրի գոյր ճանապարհ մի, որ ասի թէ անտի գնայր յայնմ գիշերի առ աշակերտսն և ասէր մի՛ ննջէք, և կայր աղօթէր: Սակայն այժմ խցեալ տեսանի քարակուտիւ, զի մի ոճրագործութիւնք լինիցին . . . և է այրն բոլորաձեւ և քարափոր՝ ունելով երեք սիւն յինքենէ, և յառաստաղն լուսամուտ մի բոլոր, և նկարեալ ի նմա ոսկեքարիւ աստեղունք(*):

(*) Օտար ուղեգիրներէն Յովհաննէս Եպս. Վրդպուրկի (1165), Պազիլ Բոսնիաբով (1561) եւ ուրիշներ կը գրեն թէ այրին մէջ կային նկարներ եւ Փրկչին պատկերք: Իսկ Eugène Roger այրին կամարին վրայ տեսած է մեծ ասղեր եւ ուրիշ նկարներ որ կը ներկայացնէին Յիսուսի Զարչարանաց խորհուրդը (Bar. gd. էջ 281):